Հավելված
ԵՊՀ ռեկտորի 19.12.24թ. թիվ 245/12-Լ հրամանի

# ԿԱՐԳ
# 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողի (այսուհետ՝ աշխատող)՝ վերապատրաստման և ատեստավորման գործընթացին մասնակցելու նպատակով դիմում ներկայացնելու կարգը:

## Ի.ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2. ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2023 թ. փետրվարի 9-ին ընդունված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգի» համաձայն վերապատրաստում անցնելու նպատակով աշխատողը դիմում (ձևանմուշը կցված է՝ հավելված 1) է ներկայացնում ռեկտորին:

3. Աշխատողի դիմումը 3-օրյա ժամկետում ռեկտորի կողմից ուղակվում է ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնին (այսուհետ՝ Կենտրոն):

4. Կենտրոնը ստուգում է աշխատողի դիմումում նշված անձնական և այլ տվյալները, որից հետո աշխատողին ուղարկում է առցանց ինքնագնահատման հարցաթերթի էլեկտրոնային հղումը:

5. Աշխատողը պարտավոր է 5-օրյա ժամկետում առցանց լրացնել ինքնագնահատման հարցաթերթը:

6. Կենտրոնը հարցաթերթի հիման վրա 10-օրյա ժամկետում կազմում է տվյալ աշխատողի անհատական վերապատրաստման ծրագիրը, նրան ընդգրկում է վերապատրաստվողների խմբում և աշխատողին ուղարկում է վերապատրաստման դասընթացների նկարագրությունը և ժամանակացույցը:

7. Վերապատրաստման արդյունքում աշխատողին Կենտրոնի կողմից տրամադրվում է կուտակած միավորների վերաբերյալ տեղեկանք, որում ներառվում են նաև 2022-2024 թվականների ընթացքում ԵՊՀ վերապատրաստման ծրագրերով աշխատողի կուտակած միավորները:

## II. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. «2024-2026 թվականների ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման և ատեստավորման ընթացակարգի» (այսուհետ՝ ընթացակարգ) համաձայն ատեստավորում անցնելու նպատակով աշխատողը դիմում (ձևանմուշը կցված է՝ հավելված 2) է ներկայացնում ռեկտորին՝ կցելով ընթացակարգում նշված փաստաթղթերի փաթեթը:

9. Աշխատողի դիմումը 3-օրյա ժամկետում ռեկտորի կողմից ուղակվում է ԵՊՀ ռեկտորի 11.10.2024թ. թիվ 196/135-Ա հրամանով ստեղծված ատեստավորման հանձնաժողովին:

10. Հանձնաժողովը աշխատողի դիմումի և կից փաստաթղթերի հիման վրա, ընթացակարգին համապատասխան կազմակերպում է աշխատողի ատեստավորումը:

Հավելված 2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

_____ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

_____ԱՄԲԻՈՆԻ_____

_____ից

ԴԻՄՈՒՄ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը դասախոսի ատեստավորման հանձնաժողովին՝ մասնակցելու դասախոսների կամավոր ատեստավորմանը՝ ըստ «2024-2026 թվականների ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման և ատեստավորման» ընթացակարգի:

Դիմող՝ _____ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն) (օր, ամիս, տարեթիվ)

Հավելված 1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ

Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

_____ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

_____ԱՄԲԻՈՆԻ_____

_____ից

ԴԻՄՈՒՄ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը Շարունակական կրթության կենտրոնին՝ ընդգրկվելու դասախոսների վերապատրաստման ծրագրում՝ ըստ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի 2023-2026 թթ. վերապատրաստման ծրագրի:

Դիմող՝ _____ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն) (օր, ամիս, տարեթիվ)